



Հովհաննես Թուխանյան

Ուիկը

1

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում ու մկրկում, կանչում .

Մնուկ ուլիկ,

Միրուն բալիկ,

Ման եմ եկել սարեսար,

Կաթն եմ արել քեզ համար,

Դըռնակը բա՛ց, ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ քեզ .

Մնուկ ուլիկ,

Միրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալիս նրան ու կրկին գնում արոտ:

2

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում .

Սևուկ ուլիկ,
Միրուն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դըռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ .
Սևուկ ուլիկ,
Միրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում .

Էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը Էդպես չի կանչում: Նա քաղցր ու
բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛ն անի . . .
Գնա՛ . . . Չեմ ուզում քեզ . . . :

Ու գայլը հեռանում է, գնում:

3

Գալիս է մայրը, դուռը ծեծում .

Սևուկ ուլիկ,
Միրուն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դըռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ .
Սևուկ ուլիկ,
Միրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում .

Գիտե՞ս, մայրիկ, ի՞նչ եղավ: Մի քիչ առաջ մինը եկավ, դուրը զարկեց ու կանչում էր .

Սևուկ ուլիկ,

Միրուն բալիկ:

Ասում էր՝ դուրը բա՛ց արա: Էնպե՛ս հաստ ձայն ունե՛ր: Էնպե՛ս վախեցա՛, Էնպե՛ս վախեցա՛ . . . Դուրը բաց չարի, ասի՛ չեմ ուզում, գնա՛ . . .

Պա՛ պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՛նչ լավ է եղել, որ բաց չես արել, ասավ վախեցած մայրը: Էդ գայլն է եղել, եկել է, որ քեզ ոտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես, ասա՛ գնա՛, թե չէ՛ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով: